ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 սեպտեմբերի 2017 թվականի N 154-Ա

Ռ. ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 226-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 16631-17 զեկուցագիրը, ինչպես նաև *Ռ. Սահակյանի* գրավոր բացատրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Ռոբերտ Կամսարի Սահակյանի*** նկատմամբ կիրառել ***«խիստ նկատողություն»*** կարգապահական տույժը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի 26
ք. Հրազդան